

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՐՆԻ ԸՈՒՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ
P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Է. Տարի, Թիւ 269, Ուրբաթ, 06 ՓԵՏՐՈՒԱՐ, 2015

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂՈՎՈՍԱՐԱՆԷՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂԻՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՒ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԷՆ ՆԵՐՄ

Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքին ներս, գումարուեցաւ Ազգային Կեղրոնական Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներու լիակատար նիստեր, ինչպէս նաեւ հանդիպում մը տեղի ունեցաւ թեմակալ առաջնորդներու հետ:

Յիշեալ ժողովներուն կրօնական, դաստիարակչական, տնտեսական, վարչական, յարաբերական, միջ-եկեղեցական եւ այլ հարցերու շարքին, յատուկ կարեւորութեամբ քննուեցան Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առնչուած ծրագիրներ ու աշխատանքներ, թէ՛ Կաթողիկոսարանի եւ թէ՛ թեմական մակարդակներու վրայ:



WWW.AZTARAR.COM

ՀԱՅԿԱԿԱՆ

Նալբանդեան Մինիխի Մէջ Կը Մասնակցի Անվտանգութեան Ժողովին

Մինիխի տարեկան անվտանգութեան խորհրդաժողովին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան 5-էն 7 փետրուարին պիտի այցելէ Գերմանիա:

Ըստ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան տեղեկատուութեան ծառայութեան, Մինիխի մէջ նախատեսուած է նախարար Էդուարդ Նալբանդեանի տեսակցութիւնը ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն հետ:

Երեւան. «Ազրպէյճան Ռազմափորձեր Կը Կատարէ Վիեննայի Փաստաթուղթի Դրոյթներուն Խախտումով»

Սկսած լայնածաւալ ռազմափորձերը, զինեալ ուժերու բոլոր զօրատեսակներու մասնակցութեամբ, Ազրպէյճան կը կատարէ Վիեննայի փաստաթուղթի դրոյթներուն խախտումով, «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին յայտնած է Հայաստանի պաշտպանութեան նախարարի մամլոյ քարտուղար Արծրուն Յովհաննիսեան:

2 փետրուարին Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդագրութիւն տարածած է յայտնելով, որ Ազրպէյճան սկսած է լայնածաւալ ռազմափորձերու, որոնց կը մասնակցին 20 հազար զինուոր, 300 զրահապատ կառքեր, 200 հրթիռային կայան եւ այլ հրետանի, մինչեւ 20 մարտական օդանաւ: Նախարարութիւնը ոչ մէկ տեղեկութիւն հաղորդած է այն մասին, թէ ռազմափորձերը երբ կ'աւարտին:

«Նախ՝ Ազրպէյճան կը խախտէ դրոյթները, որովհետեւ ժամկէտներ չէ նշած, իսկ պարտաւոր էին ծանուցագիրով տեղեկացնել ծրագրուած ռազմափորձին մասին», ըսած է Յովհաննիսեան:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութենէն նախապէս յայտնած են, որ ազրպէյճանական կողմը պարտաւոր էր նաեւ ծանուցագիրներով տեղեկացնել ռազմափորձերուն մասնակցող անձերուն, զէնքի, ծանր հրետանիի, համազարկային կրակի հրետանային համակարգերու տեսակներուն եւ քանակին մասին, որուն շեմերը սահմանուած են Վիեննայի փաստաթուղթով:

Պատասխանելով այն հարցումին, թէ հայկական կողմը այս խախտումներուն ինչպէ՞ս պիտի արձագանգէ, Արծրուն Յովհաննիսեան ըսած է. «Յատուկ դրոյթիւն կայ, եւ այդ դրոյթեան դրսեւորումն ալ այն է, որ մենք կը բողոքենք: Այլ քայլեր չկան, որովհետեւ մենք իրաւասութիւն չունինք այլ քայլերու ձեռնարկելու»:

Պուրխաստթի Քաղաքային Խորհուրդը Պաշտօնապէս Ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

Սպանիոյ Պուրխաստթ քաղաքի քաղաքային խորհուրդը յունուար ամսուան ընթացիկ նիստին ընթացքին (Քոմփրոմիս եւ «Երոզական Միութիւն» կուսակցութիւններու «կողմ» եւ

Ընկերվարական եւ Ժողովրդական կուսակցություններու «ձեռնպահ» քուէարկութեամբ ընդունեց Քոմիքոմիս կուսակցութեան ներկայացուցած միջնորդագիրը, որուն ընդունումով քաղաքային խորհուրդը պաշտօնապէս կը ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը եւ կը դատապարտէ անոր ընթացքին կատարուած մարդկութեան դէմ յանցագործութիւնները:

Միջնորդագիրին մէջ նշուած է. «Այս տարի կ'ամբողջանայ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը, ցեղասպանութեան, որ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը կը նկատուի: 1915-էն 1921 ժամանակամիջոցին մէջ ներկայիս Թուրքիոյ տարածքին տեղի ունեցան հայ ժողովուրդի զանգուածային կոտորածներ եւ արտաքսումներ, յատկապէս երիտասարդ թուրքերու վարչակարգին օրով, անոնց պատճառով զոհուեցան 1,5 միլիոն հայեր, իսկ մօտաւորապէս 2 միլիոնը ստիպուած եղան լքել իրենց բնակավայրերը՝ ստեղծելով հայկական մեծ սփիւռքը»:

Նախագիծը պիտի փոխանցուի Միսլաթայի «Արարատ» ընկերակցութեան, արտաքին գործոց նախարարին, Քոնկրեսին մէջ ներկայացուած կուսակցական խումբերուն, Վալենսիոյ խորհրդարանին մէջ ներկայացուած կուսակցական խումբերուն, Սպանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան եւ Պուրխաստթի հասարակական կազմակերպութիւններուն:

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը Քննադատած Է Հայաստանի Տրամադրուող Ելեւմտական Օժանդակութեան Չափը Նուազեցնելու Օպամայի Մտադրութիւնը



Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի վարչակազմը մտադիր է 2016-ի պիւտճէի ծիրին մէջ մրցանշային չափով նուազեցնել Հայաստանին, ինչպէս նաեւ Ազրպէյճանին տրամադրուելիք ելեւմտական օգնութեան չափը:

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը կը հաղորդէ, որ խօսքը մասնաւորապէս տնտեսական աջակցութեան մասին է, մինչդեռ երկու երկիրներուն տրամադրուող զինուորական օգնութեան չափը պիտի հաւասարեցուի:

Օպամա առաջարկած է 2016-ին 18,360,000 տոլար յատկացնել Հայաստանի տնտեսության աջակցության հիմնադրամին: Եւ եթէ Քոնկրետը այս առաջարկը հաւանութեան արժանացնէ, ապա ատիկա պիտի ըլլայ Հայաստանի անկախութեան տարիներէն ի վեր նուազագոյն տնտեսական օգնութիւնը:

Օպամայի առաջարկած գումարին չափը 2 միլիոն տոլարով նուազ է նախորդ անգամ յատկացուած գումարէն:

Ամերիկեան վարչակազմին այս քայլը քննադատած է Ամերիկայի հայ դատի յանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան, որ միեւնոյն ժամանակ ողջունած է այն փաստը, որ Հայաստանին ու Ազրպէյճանին տրամադրուող զինուորական օգնութեան չափը հաւասար է:

Ինչ կը վերաբերի Լեռնային Ղարաբաղի, ապա ամերիկեան կողմը որեւէ ելեւմտական օգնութիւն չէ նախատեսած:

Ազրպէյճանական Կողմէ Կրակոցներ Արձակուած Են Տոլսէսի Եւ Այգեպարի Ուղղութեամբ

Չորեքշաբթի օր առաւօտեան ժամերէն մինչեւ երեկոյ, ազրպէյճանական կողմը բազմապատկած է կրակոցները Տոլսէս գիւղի ուղղութեամբ, տեղեկացուցած է Տոլսէս գիւղի գիւղապետ Արարատ Աւալեան: Չորեքշաբթի օր կրակոցներ արձակուած են նաեւ Այգեպարի ուղղութեամբ: Այգեպարի գիւղապետ Անդրանիկ Այտինեան ըսած է, որ հակառակորդը խոշոր տրամաչափի գնդացիներով կրակած է գիւղին ուղղութեամբ:

Ազրպէյճանի զինեալ ուժերու արձակագէնի կրակոցէն Չորեքշաբթի օր վիրաւորուած է Տաւուշի մարզի Տոլսէս գիւղի բնակիչ 85-ամեայ Լեւոն Անդրեասեան:

Գիւղատնտեսութեամբ Զբաղողները Վարկաւորման Մատչելիութեան Կապուած Խնդիրներ Ունին

Հայաստանի Ազգային ժողովի նիստին կառավարութեան հետ հարցում-պատասխանի ժամանակ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան քարտուղար Ադուան Վարդանեան հարցում ուղղած է կառավարութեան: Ան նշած է, որ կը մօտենայ գիւղատնտեսական աշխատանքներու շրջանը, եւ կան խնդիրներ վարկաւորման մատչելիութեան կապուած: Ի՞նչ քայլեր կը ձեռնարկէ կառավարութիւնը այդ առումով:

Գիւղատնտեսութեան նախարար Սերգօ Կարապետեան նշած է, որ հաշուի առնելով կլիմայական պայմանները, կառավարութիւնը արդէն ձեռնարկած է միջոցառումներու՝ գիւղատնտեսական տնտեսութիւններուն օժանդակելու համար: Ծրագիրները պարարտանիւթերու, սերմացուներու, վառելանիւթի տրամադրման ուղղութեամբ կը շարունակուին, անոնք պիտի տրամադրուին անցեալ տարուան զիններով:

Նախարարը յոյս յայտնած է, որ կառավարութիւնը կարենայ գիւղացիներուն պահանջը բաւարարել: Վարկաւորման կապուած ան նշած է, որ այս տարի կառավարութիւնը ատոր համար պիտի յատկացնէ 1 երկիլիոն 357 միլիոն դրամ:

Սահմանադրական Փոփոխությունները Նոր Որակ Են Առաջացնելու, Որտեղ Բոլորը Իրենց Տեղն Են Ունենալու

Ստորև կու տանք «Հայկական ժամանակ» օրաթերթին կատարած հարցազրույցը ՀՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմէն Ռուստամեանի հետ: Ռուստամեան կ'անդրադառնայ Հայաստանի մէջ սահմանադրական փոփոխություններու անհրաժեշտութեան եւ այդ ծիրին մէջ ՀՅԴ- եռեակի քաղաքական ուժեր փոխյարարեցրութեան:

ՀԱՐՅՈՒՄ.- Պարոն Ռուստամեան, մէկ օրից տեղի է ունենալու Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան հրաւիրած համաժողովը, որին մասնակցելու հրաւեր ՀՅԴ-ն չի ստացել, դուք տեղեկություն կամ ենթադրություններ ունե՞ք, ձեր գործընկերները, որոնց հետ մինչեւ վերջերս սերտօրէն համագործակցում էիք, ինչո՞ւ ձեզ էլ չեն հրաւիրել:



ՊԱՏԱՄԽԱՆ.- Ես տեղեակ չեմ՝ ինչպէս են որոշել, ինչ են որոշել, բայց այն, ինչ ենթադրում է այնտեղ ներկայացնել, մենք մեր տեսակետը յստակ ներկայացրել ենք. մեր կարծիքով, ելքը այս իրավիճակից ոչ թէ պարզունակ իշխանափոխութիւնն է, այլ ամբողջական իշխանափոխութիւնը, որը ենթադրում է համակարգի լուրջ փոփոխութիւն, որը թոյլ չի տայ, որ նորից նոյնը կրկնուի, եւ դրա համար մենք մեր ընթացքը հիմնել ենք սահմանադրական փոփոխությունների իրականացման միջոցով հասնել խորքային, արմատական փոփոխությունների եւ երկրում ստեղծել իսկապէս ժողովրդավարական միջավայր:

Հ.- Իրենք Դաշնակցութեանը մեղադրում են, ամէն դէպքում նրանց կայքերում այդպիսի մեղադրանքներ են հնչում, որ դուք համագործակցում էք իշխանությունների հետ, դուք պաշտօններ էք ստանալու: Ի դէպ, դուք յայտարարում էիք, որ Արա Նոսնեանը պաշտօն չի ստանայ, բայց ստացաւ:

Պ.- Մենք ասել ենք՝ նախարար չի դառնայ:

Հ.- Նաեւ խօսում է, որ հնարաւոր է դեսպանների պաշտօններ ստանաք, ապագայում էլ համաձայնական կառավարութիւն ձեւաւորէք իշխանութեան հետ:

Պ.- Ովքեր խօսում են Դաշնակցութեան մասին, բացարձակապէս կա՛մ տեղեակ չեն, կա՛մ չեն ուզում ներկայացնել այնպէս, ինչպէս ՀՅԴ-ն պատկերացնում է ստեղծուած վիճակը եւ ելքեր է առաջարկում այդ վիճակից: Մենք ասել ենք, որ ՀՅԴ-ն համագործակցում է բոլոր նրանց հետ, ովքեր համակարծիք են իր հետ յստակ ուղղությունների վերաբերեալ, որոնք սահմանուած են մեր 7 կէտերի մէջ: 12 թուականից այդ ընթացքն է որդեգրած, եւ չգիտես ինչու, մարդիկ չեն ուզում դա տեսնել: Մենք համակարգային փոփոխութիւն ենք ուզում անել, որն անհնար է առանց սահմանադրութեան փոփոխությունների, մեր 7 կէտերի մէջ յստակ խօսում է խորհրդարանական համակարգին անցնելու մասին, եւ դա այսօր իսկապէս հնարաւոր է դարձել իշխանությունների այդ մտեցումը որդեգրելու պայմաններում:

Հ.- Իսկ եթէ պարզուի, որ եռեակն է ճիշդ, որ իշխանությունն իրականում այդ փոփոխություններով փորձում է վերարտադրուել, իսկ եռեակը փորձում է գնալ իշխանափոխութեան, բայց միւս ուժերը չեն սատարում իրեն:

Պ.- Եթե պահպանում է գործող համակարգը, վերարտադրում տեղի է ունենալու այսպես, թե այնպես, անկախ նրանից, թե ում անունը կը լինի նախագահի պաշտօնին: Մենք 3 նախագահ ենք փոխել, բայց համակարգը պահպանուել է: Սա չեն ուզում հասկանալ մարդիկ: Քանի այս համակարգը չի փոխուել, դա հենց վերարտադրման ուղիղ ճանապարհն է:

Հ.- *Այսինքն՝ դուք էլ եռեակի՞ն էք մեղադրում, որ իրենք են նպաստում իշխանութեան վերարտադրմանը՝ դեմ լինելով սահմանադրական փոփոխություններին:*

Պ.- Ի հարկե, որովհետև համակարգի պահպանումը նշանակում է վերարտադրման գործընթացի շարունակություն: Մենք դա ապացուցում ենք անցած մեր ամբողջ անկախութեան ընթացքով: Նոր փուլ պիտի սկսուի երկրում: Հակառակ պարագայում նոյն վիճակն է լինելու: Պարզ հարց եմ տալիս, մեկը թող ինձ բացատրի, թե ինչո՞ւ 3 նախագահից ժողովուրդը այս կամ այն չափով դժգոհել է, հիմա պիտի չդժգոհի 4-րդից: Այ սա՛ է վերարտադրումը: Մենք էլ ասում ենք՝ ոչ, պիտի թոյլ չտալ, որ դա տեղի ունենայ: Այս պարզ բանը չեն ուզում հասկանալ, որովհետև մարդիկ ուզում են իրենց մանկութեան երազանքը կատարուի, դառնան նախագահ:

Հ.- *Իսկ եթե, այդուամենայնիւ, սահմանադրական փոփոխություններից յետոյ Սերժ Սարգսեանը դառնայ Ազգային ժողովի նախագահ, վարչապետը էլի Հայաստանի հանրապետական կուսակցությունից լինի ու նախագահն էլ նոյն շրջանակից, չեղա՞ւ վերարտադրություն:*

Պ.- Այդպես մեր առաջարկած համակարգում հնարաւոր չէ: Այդ անձինք կարող են մնալ համակարգում այս կամ այն տեղում, որովհետև իրենց չես կարող արտաքսել երկրից, եւ եթե մեկն ասում է՝ գալու է դա անի, խաբում է, այդպես չի լինելու: Իրականութեան մեջ մեր առաջարկը փոխում է իշխանութեան որակը այնպես, որ այդ իշխանությունը դառնում է զսպուած, հակակշռուած, եւ այդ պարագայում ընդդիմությունը ունենում է շատ լուրջ հսկողութեան հնարաւորութիւն, այդպես անձը որտեղ էլ լինի, նոյն որակի իշխանութիւն չի կարող ունենալ, ինչպէս հիմա, որ դա օգտագործի իր շահերի համար: Սա ուղիղ չեն ուզում հասկանալ, կամ իրենց ձեռնտու չէ, որովհետև իրենք դեմ են միայն անձին, որ այդ մեծ լծակներն ունի, իրենք ասում են՝ ինչո՞ւ կորցնենք այդ լծակները, եթե առիթ կայ, որ ես գամ եւ այդ նոյն լծակներն օգտագործեմ:

Հ.- *Եթե 7 կէտերը կատարուեն, սահմանադրական փոփոխություններից յետոյ համաձայնական կառավարութիւն կը կազմէ՞ք Հայաստանի Հանրապետական կուսակցութեան հետ:*

Պ.- Մենք ձեռքներս քշտած կը մտնենք այդ գործընթացի մեջ: Ամբողջ հարցն այն է, որ այն, ինչ կատարուելու է մեր ասածի արդիւնքում, դրանից օգտուելու են բոլորը, բայց այս ընթացքում հայիոյելու են, քարկոծելու են մեզ, ինչպէս եղել է մինչեւ հիմա, ոչինչ, մենք դրան սովոր ենք: Ազգային ժողովի յանձնաժողովներում ընդդիմութեան տեղերի ընդլայնման հետ կապուած էլ ՀՅԴ-ն մեծ ջանք ու եռանդ գործադրեց, որպէսզի Դոնթի բանաձեւով բաշխուեն յանձնաժողովների նախագահների պաշտօնները: Այն ժամանակ ՀՅԴ-ն 2 պաշտօն ուներ, քարկոծեցին: Ասացինք, այդ նոյն բանաձեւով յաջորդն էլ կը գայ, կը ստանայ այդ տեղերը: Հիմա ոչ ոք չի ասում, որ ոչ իշխանական ուժերը յանձնաժողովի 4 նախագահ ունեն: Ինչո՞ւ չեն համարում, որ նոյն ձեւով համագործակցում են, իշխանությունների կցորդ են դարձել: Այն ժամանակ մեզ հայիոյեցին, նոյնն էլ լինելու է հիմա: Սահմանադրական փոփոխությունները նոր որակ են առաջացնելու, որտեղ բոլորը իրենց տեղն են ունենալու, ոչ թե օտարուելու են պետությունից եւ ոչ թե նոյնացած են լինելու իշխանութիւն-պետութիւն, այլ պետութիւնը դառնալու է բոլորինը:

ԱՆՂՆԱԴԱՐՁ

Հոչակագիրը Չի Սահմանափակուի 100-Ամեակով



Հայոց ցեղասպանության 100-ամեակի ձեռնարկները համակարգող պետական յանձնաժողովի 5-րդ նիստը պատմական նկատուելու բոլոր տուեալները կ'ամբողջացնէ: Համայն հայութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեամբ, Արցախի հանրապետութեամբ եւ սփիւռքով, իր պետական, հոգեւորական թէ ազգային-հասարակական ներկայացուցիչներով հաստատած է գուցէ ամենէն համահայկական փաստաթուղթը, որուն շուրջ կայացած է ներազգային համաձայնութիւնը: Այս մէկը առաջնային խորհուրդն ու յաջողութիւնն է այս կարեւորագոյն իրադարձութեան:

Փաստաթուղթի նախագիծը քննարկման առարկան դարձած է հայկական աշխարհի բոլոր ներկայացուցչական մարմիններուն կողմէ: Ներկայացուցչական հանգամանքները այստեղ եւս պէտք է ընկալել պետական, հոգեւորական եւ հասարակական առումներով:

Այս հոչակագիրը այն փաստաթուղթն է, որ ոչ միայն իբրեւ ուղենիշ պիտի յատկանշէ Հայոց ցեղասպանության 100-ամեակի առիթով ձեռնարկուած , այլ անկէ անդին իբրեւ համահայկական ռազմավարութեան հայեցակարգ իր հիմնադրոյթներուն շուրջ պիտի յաջողի համախմբել համահայկական առաջնահերթ բնոյթի աշխատանքները: Ազգային-քաղաքական մտածողութիւնը յաճախ յղում պիտի կատարէ այս հոչակագիրին՝ իր հետագայ ռազմավարական նախագիծերը մշակելու աշխատանքներուն ընթացքին:

Համահայկական հասարակութեան ձեւաւորման ու կայացման, բայց նաեւ համահայկական նոր կառուցակարգերու յառաջացման առաջադրանքին մեկնակէտը կարելի է նկատել այս հոչակագիրը, որուն բովանդակութիւնը ամբողջականութեան եւ համակողմանիօրէն ընկալելիութեան առումով աննախադէպ է:

Հոչակագիրը սակայն, ուղերձ ունի նաեւ ցեղասպան պետութեան այսօրուան ժառանգութիւնը առանց երկմտանքի ստանձնած եւ ժխտողականութեամբ այդ քաղաքականութեան շարունակականութիւնը իրականացնող Անգարայի պետութեան, որ արդէն խորապէս անհանգիստ հայկական կողմի դրսեւորած միակամութեան դիմաց, կը շարունակէ հայութեան հատուածներուն միջեւ հակասութիւններ փնտռելու եւ խաբուսիկ գործողութիւններ կատարելու հնամաշ ոճով յատկանշուած քաղաքականութիւնը:

Ցեղասպանության հետեւանքներու վերացման կամ յաղթահարման միտող իրաւական փաստաթուղթերու հոլովոյթի ներկայացումը, ճանաչման, դատապարտման, հատուցման նշումները՝ մինչեւ Սէր ու Ուիլսընեան իրաւարար վճիռ, պահանջատիրութեան պետականացման ամրագրման յայտարարութիւններ են, որոնք հայկական կողմին հետ հաշուի նստելու պարտաւորութիւնը կը յուշեն Թուրքիոյ: Այս հոչակագիրը պետական եւ հասարակական մտեցումներու, ընկալումներու եւ դրսեւորումներու միջեւ հասկնալիօրէն

ոճային տարբերություններին վեր նպատակային նոյնություն էլ գաղափարախօսական համագգայնություն կ'ընդգծե, գոր շրջանցելը անկարելի է:

Միջազգային փաստաթուղթերուն կատարուած տեղին նշումները, իրաւական հարթութեան կարեւորումը, ազգային նպատակներու բանաձեւումը, ու տակաւին թուրք հասարակութեան մէջ երանգային տարբերութիւն նկատելն ու միջազգային հանրութեան ճիշդ ուղերձ փոխանցելը հոշակագիրի բովանդակութեան կ'ապահովեն համագգային տարողութիւն:

Հոշակագիրի ընթերցման վայրը եւս գուտ արարողակարգային կամ ընթացակարգային բացատրութիւն չունի: Խորքային իմաստ կը պարփակե նման հոշակագիրի երկրի դեկավարին կողմէ ընթերցումը հայկական աշխարհի ներկայացուցիչներու ներկայութեան, Յեղասպանութիւնը եւ համագգային պահանջները խորհրդանշող Ծիծեռնակաբերդի մէջ:

Իրադարձային նշանակութիւն ունին թէ՛ փաստաթուղթի բովանդակութիւնը, թէ՛ անոր մշակման եւ հրապարակման եղանակները, թէ՛ վայրը:

Նման բովանդակութեամբ փաստաթուղթի ամրագրումէն ետք, հայութեան առաջնային խնդիրները հետապնդելու համար անյետաձգելիօրէն անհրաժեշտ են նոր կառոյցներ, ուր պիտի համախմբուի հայկական աշխարհի ներկայացուցչութիւնը: Պետական յանձնաժողովի 4-րդ նիստին հնչած Համահայկական խորհուրդը առաջադրուած կառուցակարգի մեկնարկային քայլն է:

Հոշակագիրի ոգին կը պահանջէ համահայկական նոր կառոյցներու ձեւաւորումը: 100-ամեակէն անդին, հաստատութենական հիմքի վրայ կայացած նոր համակարգերով:

ՀՕՄ "Ի՛նչ վիթխարի երջանկութիւն է սիրել եւ սիրուիլ" ԲՄՄ

ՄԻՐՈՅ ՕՐ

Հովանաւորութեամբ՝

Գեղայ. Տէր Մասիս Ծ. Վրդ. Զօպույեանի

Զուէթի եւ Շրջակայից Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ

Կազմակերպութեամբ՝

ՀՕՄ - ԲՄՄ-ի Վարչութեան

Մասնակցութեամբ՝ Սիրոյ երգերու մեկնաբան, "Սիրոյ Սոխակ"

ԺՈՋԷՖ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 12 Փետրուար 2015-ին, Երեկոյեան ժամը 8:30-ին

Սալմիյէի "Holiday Inn" պանդոկի Ալ Տանա սրահէն ներս:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆԻՆ ԱՆԿԻՆԸ

Փետրուարեան Ապստամբութիւնը Մեր Յուշերու Պրիսմակէն Ներս



94 տարիներ առաջ, 18 Փետրուար 1921-ի արեւածագին, հայ ժողովուրդը իր հազարամեակներու պատմութեան մատենին աւելցուց անջնջելի էջ մը, շնորհիւ խորհրդային բռնակալութեան դէմ իրագործած իր հերոսական ապստամբութեան:

Այդ օրերուն, գրաւման բանակի վերածուած պոլշեիկներուն հալածանքները, բռնակալութիւնը, անարդարութիւնն ու անիրաւութիւնը անտանելի էին, որոնք կարծէք մահացու դանակ մը ըլլային, հասած

հայու ոսկորին: Այս բոլորին դէմ, հայ ժողովուրդը չէր կրնար ձեռնպահ մնալ...

Պոլշեիկները բռնագրաւեցին պարզ ժողովուրդին ամբողջ ունեցուածքը, կատաղի արշաւ ծաւալեցին հայոց անկախութիւնը կերտած քաղաքական ղեկավար գործիչներուն դէմ եւ քանի մը շաբթուան ընթացքին փորձեցին ամէն ձեւով խլել հայ ժողովուրդի անկախութիւնը, ինչպէս նաեւ անհետացնել եւ բանտարկել հայ ազգի հերոսները... այդ բոլորը բաւարար պատճառներ էին, որպէսզի յորդի համբերութեան բաժակը հայ ժողովուրդին:



Հայուն յատկանիշներէն չէր եւ չէ եղած, նման պարագաներու դիմաց մնալ լուռ եւ անգործ. եւ այս անգամ պատահածը գաղափարական կամ քաղաքական յեղափոխութիւն մը չէր, ոչ անգամ Դաշնակցութեան ղեկավարներուն կողմէ թելադրուած, այլ ամբողջ ժողովուրդի մը ըմբոստացում:

Այսպիսով, Փետրուար 18-ը նշուեցաւ, որպէս համաժողովրդային առաջին ըմբոստացումը, որուն շնորհիւ խաղաղութիւնը անգամ մը եւս ծնունդ առաւ անկախ Հայաստանի մէջ եւ արեւու ճառագայթները հայոց փրկութիւնը յայտարարեցին:

Փա՛ որ ձեզ Հայրենիքի անմահ հերոսներ:

Ընկ. Սիլվի Տէկիրմէնճեան

Վերանորոգում և Ուխտով Շարունակենք Մեր Պայքարը

Հայաստանն հեռու, Հայաստանին համար համայն հայ ժողովուրդը իր ուխտը նորոգելու համար, 100 տարի շարունակ Ապրիլ 24ը նշած է որպես ողբի եւ սուգի օր:

Հայոց Ցեղասպանությունը կամ Մեծ Եղեռնը երիտթուրքական «Իթթիհատ վե թերաքի» կուսակցության կողմէ կազմակերպում ցեղասպանություն է, որուն արդիւնքով 1915-1923 թուականներուն զանգուածային տեղահանության ենթարկում էր բնաջնջում էր Արեւմտեան Հայաստանի հայ բնակչությունը: Հայոց Ցեղասպանության օրը Պաշտօնապէս կը նշուի Ապրիլ 24-ին, ի յիշատակ Ապրիլ 23 1915ի գիշերը Կոստանդնուպոլսոյ ձերբակալում շուրջ 600 հայ ազգի մտաւորականներու:

Լայն իմաստով Հայոց ցեղասպանությունը Թուրքիոյ տարբեր վարչակարգերու կողմէ ծրագրուած ու հայ ժողովուրդի դէմ շարունակաբար գործադրուած ցեղասպանություն էր:

1.5 միլիոն հայեր բռնի ոյժով տեղահանուեցան իրենց տուններէն, բաժնուեցան իրենց ընտանիքներէն եւ ուղղուեցան անապատի ճամբաները, որոնցմէ շատեր այդքան ալ բախտաւոր չէին՝ տեսնելու Տէր Զօրի աւազները: Ոմանք մահացան իսկ ուրիշներ հացի հետ փոխարինեցին իրենց զաւակները:

Կոմիտաս վարդապետ Իրաւունք ունէր խելագարուելու, երբ իր աչքի դիմաց հայ աղջիկներն ու հարսները իրենք զիրենք սպաննեցին Եփրատ գետ նետելով:

Եփրատէն հեռու՝ անապատի մէջ

Հայրենի ողբալի սպանդէն պրծող

Քանի մը խեղճուկ տաղաւարներու մէջ

Ցնցոտիներով էին ծածկած իրենց մարմինը

Իրենց հայեացքներուն մէջ մշտական սարսափն էր սարեր

Աւազի վրայ նստած ձերեր կը սորվեցնէին իրենց թռոններուն.

«թուրքը տարաւ հայրիկիս մայրիկիս եւ ախպարիկիս»:

Այսօր մենք որպէս հայու նկարագիր ունեցող երիտասարդներ կը պաշտպանենք մեր դատը, ունինք կամք, ունինք սէր մեր հայրենիքին, յարգանք 1.5 միլիոն զոհերուն եւ նպատակ համայն աշխարհին ցոյց տալու անվախօրէն վայրագ թուրքի կատարած ոճրագործությունը: Ան այսօր կը ժխտէ ցեղասպանության իրականությունը՝ պահուրտելով իր սուտերու ետեւ խուսափելու համար հատուցումներէ:

Կ'ուզեմ փակել խօսքս Պարոյր Մեւակի պատգամով՝ ուղղելով զայն անգութ թուրքին. «Մենք կանք պիտի լինենք ու դեռ շատանանք»:

Ընկ. Սէրլի Պետիրեան

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

Հայոց Բանակի 23-րդ Տարեդարձի Նշում

Յունուար 28-ին Հայոց բանակի 23-րդ տարեդարձին առիթով Հայաստանի Հալեպի գլխավոր հիւպատոսութեան մէջ կազմակերպուեցաւ ընդունելութիւն:

Ձեռնարկին ընթացքին Հալեպի մէջ Հայաստանի գլխավոր հիւպատոս Տիգրան Գեորգեան անդրադարձաւ հայոց բանակին ունեցած անգնահատելի դերակատարութեան՝ Հայաստանի ու Արցախի անվտանգութեան, սահմաններու պաշտպանութեան, ինչպէս նաեւ տարածաշրջանային խաղաղութեան ու կայունութեան ապահովման գործին մէջ:

Ընդունելութեան ընթացքին Հայաստանի քաղաքացիութեան անձնագիրներ յանձնուեցան խումբ մը հալեպահայերու, որոնք խօսք առնելով՝ վստահեցուցին, որ բարձր պատուով եւ պատասխանատուութեան մեծ զգացումով պիտի կրեն այս նշանակալի եւ յիշարժան օրուան առիթով իրենց ստացած Հայաստանի անձնագիրները:



* Յունուար 28-ին Յունաստանի զինուած ուժերու Սպայից տան մէջ նշուեցաւ Հայաստանի բանակի կազմաւորման 23-րդ տարեդարձը:

Գնդապետ Սամուէլ Ռամազեան անգլերէնով ներկայացուց օրուան խորհուրդը՝ անդրադառնալով հայ-յունական ամուր կապերուն, պատմական զինակցութեան եւ ներկայի համագործակցութեան, շեշտելով հայոց բանակին անգնահատելի դերը Հայաստանի ու Արցախի անվտանգութեան,

սահմաններու պաշտպանութեան, ինչպէս նաեւ տարածաշրջանային խաղաղութեան ու կայունութեան ապահովման գործին մէջ:

Շնորհակալական եւ ողջերթի խօսքերով ելոյթ ունեցաւ օտար ռազմական կցորդներու հնագոյն ներկայացուցիչ Սպանիոյ կցորդը, որուն յաջորդեց Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէրան Օհանեանի հրամանագիրի համաձայն, յոյն զինուորական ղեկավարութեան պարգևատրման արարողութիւնը:

Հրանդ Տինքի Սպանութեան 8-րդ Տարելիցին Առիթով Յիշատակի Ոգեկոչում

Յունուար 18-ին, Հրանդ Տինքի սպանութեան 8-րդ տարելիցին առթիւ Վիլեթի աւագանին մէջ խարսխած «Անաքօ» տափանաւուն մէջ տեղի ունեցաւ յիշատակի ոգեկոչում: Հոծ բազմութեան մէջ ներկայ էին Թուրքիոյ ոչ հայ քաղաքացիներ:

Ձեռնարկը սկսաւ Հիւսէյն Քարապէյի «Ոչ մէկ խաւար պիտի կարենայ մեզ մոռցնել տալ» ժապաւենին ցուցադրութեամբ, որուն յաջորդեց Աստղիկ Գառնիկեանի բացման խօսքը: Սպա լրագրող Ուիլմա Գոյումձեան-Թաճիրեան զեկուցեց դատավարութեան ներկայ վիճակին մասին: Ձեռնարկի ընթացքին կարդացուեցան Հրանդի գրութիւններէն հատուածներ՝ Աստղիկ Գառնիկեանի եւ թուրք դերասանուհի Սելին Ալթըփարմաքի կողմէ, իսկ Մարալ Քերովբեան

կարդաց Լոռ Մարշանի եւ Կիյով Փերիէի «Թուրքիան եւ հայկական ուրուականը. ցեղասպանութեան հետքերով» հատորին Թաներ Աքչամի ստորագրութիւնը կրող նախաբանէն հատուածներ: Գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական յայտագիր:

Ձեռնարկը վերջ գտաւ « Հրանդ Տինք Հիմնադրամ»-ի ժապաւեններու մրցումին պարգևատրուած Սարալ Քերովբեանի «Միւսը» ժապաւենին ցուցադրութեամբ:

100-ամեայ Ցեղասպանութիւնը՝ Հրանդ Տինքի Հետքերով

«100-ամեայ Ցեղասպանութիւնը՝ Հրանդ Տինքի հետքերով» նիւթով դասախօսութիւն մը տեղի ունեցաւ 18 յունուարին, Ալթատինայի «Պէշկէօթիւրեան» կեդրոնի սրահին մէջ: Դասախօսական երեկոն կազմակերպուած էր Թէքէեան մշակութային միութեան Փասատինա-Կլէնտէյլ մասնաճիւղի վարչութեան կողմէ, իսկ դասախօսն էր Թորոնթոյէն հիւրաբար հրաւիրուած վերապատուելի Եսայի Սարմազեանը: Հանդիսութեան ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:



Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ վարչութեան անդամներէն Գեորգ Քեօշկերեան: Ան իր ուրախութիւնը յայտնեց մեր ալեհեր բանաստեղծ Ժագ Ս. Յակոբեանի ներկայութեան առթիւ եւ ներկայացուց օրուան բանախօսը՝ վեր. Եսայի Սարմազեանը:

Վերապատուելի Սարմազեան իր խօսքին մէջ քսաներորդ դարու առաջին Ցեղասպանութիւնը վերակոչեց Հրանդ Տինքի հետքերով, որովհետեւ այդ օրը կը զուգադիպէր Տինքի նահատակութեան 8-րդ տարելիցին: Արդարեւ, չարագուշակ այդ օրը, «Ակօս»-ի իր գրասենեակի մուտքին, Հրանդ Տինք գոհը գնաց անմիտ թուրքի մը գնդակին:

Վերապատուելի Սարմազեան հանդիպած էր Հրանդ Տինքին, Պոլսոյ մօտակայ Թուզլա քաղաքի «Արմէն» ճամբարին մէջ, երբ Տինք տակաւին պատանի էր: Յարգելի բանախօսը արդարօրէն դիտել տուաւ, որ Տինք գոհը գնաց Թուրքիոյ սահմանադրութեան 301-րդ յօդուածին, որ խստօրէն կը դատապարտէր Թուրքիոյ կառավարութեան դէմ արտայայտուող ունեւ անհատ: «Իսկ Հրանդ Տինք կը հաւատար,- նշեց վերապատուելին,- որ ձուկը գլուխէն կը հոտի եւ անհրաժեշտ է պոչէն սկսիլ: Այսինքն թուրք թէ օտար պետութիւններէն պէտք չէ յուսալ որեւէ լուծում մեր դատին կապակցութեամբ, այլ պէտք է մեր դատը ժողովուրդի մակարդակին իջեցնել: Մէկ խօսքով, մեր դատը պէտք է առաջին հերթին ծանօթացնենք խնդրոյ առարկայ թուրք կառավարութեան արմատներուն՝ պարզ ժողովուրդին: Եւ այսօր մենք, բարեբախտաբար, ականատես ենք այդ երեւոյթին, երբ տասնեակ մտաւորականներ, արթնցած իրենց խոր քունէն, կը դատապարտեն թուրք կառավարութիւնը եւ կ'արտայայտուին ի նպաստ մեր իրաւունքներուն, որոնց յառաջագոյնն է Ցեղասպանութեան ճանաչումը», շարունակեց յարգելի բանախօսը:

Փակման խօսքով հանդէս եկաւ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սարգիս Ա. քինյ. Փեթոյեան: Ան բնաբան ընտրած էր Հայց. Առաքելական եկեղեցւոյ Ամերիկայի Արեւմտեան թեմի Ցեղասպանութեան 100-ամեակի լոգունգը՝ «Յարգել անցեալը, ճանչնալ ներկան եւ կերտել ապագան»: Տէր Սարգիս դիտել տուաւ, որ մենք պէտք է կարենանք անցեալը ներկային միջոցով փոխանցել ապագային, ապա թէ ոչ պիտի կորսնցնենք մեր ինքնութիւնը:

Ասոր համար ան շեշտեց, որ անհրաժեշտ է թրծել մեր նոր սերունդը ազգային ոգիով, որովհետև անիկա կը հանդիսանայ անցեալը ապագային կապող շղթային էական օղակը:

Հայկական «Գուսան» Խումբը Արժանթինի Մեջ Ներկայացաւ Ժողովրդական Երգերու Փառատօնին



Յունուար 26-ին, Արժանթինի «Գուսան» հայկական ժողովրդական երգերու խումբը Քոսքուինի ազգային ժողովրդական երգերու փառատօնին առաջին անգամ ըլլալով ներկայացուց ազգային ժողովրդական երգեր:

Արժանթինի եւ Լատին Ամերիկայի ժողովրդական երգերու ամենէն կարեւոր փառատօնին ներկայացուցիչը յայտարարեց, թէ հակառակ

Յեղասպանութեան՝ անոնք գոյատեւած են, պահպանած են իրենց ինքնութիւնը, մշակութային արժէքները եւ այդ բոլորը կը փոխանցեն սերունդներուն:

«Գուսան» խումբի ղեկավար Էնրիքէ Աւագեան նկատել տուաւ, որ՝ «Մարդիկ միշտ կապ կը պահէին հայութեան հետ եւ երբ խօսէինք Հայոց ջեղասպանութեան մասին, ժողովուրդը կը միանար մեզի»: Ան նաեւ գնահատեց համերաշխութեան այդ զգացողութիւնը:

Ներկայացման աւարտին, խումբը նուագեց երկրի ժողովրդական շարք մը երգեր՝ հայկական նուագարաններով:

Լուսանկարիչ Յակոբ Վանէսեանի Ցուցահանդէսի Բացում

Վերջերս Նիւ Եորքի ՄԱԿ-ի կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ հալէպահայ լուսանկարիչ Յակոբ Վանէսեանի «Հայրենիք» խորագրով 26 լուսանկարներու ցուցահանդէսին բացումը:



Ցուցահանդէսը կը ներկայացնէր Սուրիոյ պատերազմին պատճառով Հալէպի ողբերգական էջերը լուսարձակի տակ առնելով մարդ արարածին, յատկապէս մանուկներուն, կիներուն տառապանքը, քաղաքի աւերակներն ու քանդումները: Այլ խօսքով՝ մշակութային հսկայ ժառանգութիւն ունեցող այս քաղաքին կոտորածը վերքն ու հալէպցիին կեանքին կառչած մնալու եւ պայքարելու վճռակամութիւնը:

ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ մնայուն ներկայացուցիչ Պաշար Ճաաֆարի դիտելով լուսանկարները՝ նկատել տուաւ, թէ Նիւ Եորքի մէջ առաջին ցուցահանդէսն է, որ կը ներկայացնէ Սուրիոյ մէջ ահաբեկչական խմբաւորումներուն անմարդկային արարքներն ու բարբարոսութիւնները, որպէսզի մարդիկ իմանան իրականութիւններն ու տեսնեն մեր ժողովուրդին ապրած տառապանքը:



ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ - ՔՈՒԷՅԹ

ՏՕՆ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ ՄԵՐՈՑ ԵՒ 1036 ՎԿԱՅԻՑՆ

Այսու կը յայտնենք մեր բարեպաշտ ժողովուրդին, որ յառաջիկայ Հինգշաբթի, 12 Փետրուար 2015-ին, Սրբոց Վարդանանց Զօրավարաց տօնն է, որը միաժամանակ Քուէյթի Հայոց "Սրբոց Վարդանանց" եկեղեցւոյս Ուխտի Օրն է: Հինգշաբթի, 12 Փետրուարի երեկոյեան ժամը 6-ին, տեղի պիտի ունենայ Նախատօնակի Երեկոյեան Ժամերգութիւն. այնուհետեւ, պիտի կատարուի աղի օրհնութիւն եւ մատաղցու ոչխարի զենում:

Այս առիթով, Ուրբաթ, 13 Փետրուար 2015-ին, սուրբ պատարագ պիտի մատուցանէ եւ յաւուր պատշաճի քարոզէ, Թեմիս բարեջան Կաթողիկոսական

Փոխանորդ

ԳԵՐԱՊՍՏԻԻ ՏԷՐ ՄԱՍԻՍ Ծ. ՎՐԴ. ԶՕՊՈՒՅԵԱՆՔ

Յաւարտ սուրբ պատարագի պիտի կատարուի Մատաղի Օրհնութիւն.

Ուստի, անոնք, որ ուխտի առիթով կ'ուզեն, փոխան ոչխարի նուիրատուութիւն կատարել, կը խնդրենք որ ներկայանան Առաջնորդարանիս քարտուղարութեան կամ Թաղականութեան գրասենեակը:

Այսու կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ խուռներամ մասնակցին վերոյիշեալ արարողութիւններուն, հաղորդուելու Վարդանանց խորհուրդով:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Քուէյթ, 5 Փետրուար, 2015

ԿՆՈՋԱԿԱՆ

Ամեն Առտու Բաժակ Մը Գաղջ Ջուր Խմեցէք



Մանդագէտներ կը յանձնարարեն ամեն առտու բաժակ մը գաղջ ջուր խմել, որուն աւելցուած ըլլայ կէս կիտրոնի հիւթ: Ահա՛ թէ ինչու.

- 1.- Կիտրոնով ջուրը կ'օգնէ նիհարնալու:
- 2.- Կը մաքրէ միզային անցքերը եւ միզեցնող է:
- 3.- Կ'աշխուժացնէ լեարդին գործունէութիւնը:
- 4.- Կը խթանէ մարմնին դիմադրողականութիւնը:
- 5.- Կ'օգնէ վերքերու արագ սպիացումին:
- 6.- Մարսողութիւնը կը դիւրացնէ:
- 7.- Բերնին գէշ, անախորժ հոտը կը չեզոքացնէ:
- 8.- Կը մաքրէ եւ կը պայծառացնէ մորթը:
- 9.- Ջրագրկուած մարմնին ջուր կը հայթայթէ:

10.- Տիզիքական սպառումէ ետք կը կազդուրէ:

Ե՞րբ Եւ Ինչպէ՞ս Ջրել Ներքին Բոյսերը

Տան ներքին բոյսերը ջրելու համար պէտք է մատներուն ծայրով դպչիլ հողին. եթէ անիկա խոնաւ է եւ ձեր մատներուն կը փակչի, սպասեցէք որ հողը չորնայ, յետոյ ջրեցէք:

Եթէ նկատէք, որ ձեր բոյսին թաղարը թեթեցած է եւ մէջի հողը չորնալով՝ թաղարին պատերէն քաշուած են կծկուած է, պէտք է, որ ջրէք զայն:

Խոշոր տերեւով բոյսերը առհասարակ պէտք է ջրէք ցնցուղով կամ սափորով:



Օրքիտէն եւ սիբլամենը կ'ախորժին ջուրի լոգանքէն: Անոնց թաղարը մխրճեցէք ջուրով լեցուն երկրորդ ամանի մը մէջ: Երբ զգաք, որ հողին երեսը թրջեցաւ, ջուրէն հանեցէք թաղարը:

Քաբթիսի ընտանիքի բոյսերը պէտք չէ ջուրով ողողել. անոնք կ'ախորժին ցամաք միջավայրէն: Նայած ձեր ունեցած տեսակին՝ զայն ջրեցէք շաբաթական դրութեամբ եւ ջուրի քիչ քանակով:





ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ - ՔՈՒԷՅԹ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՕՆԱԿ

ԵՒ

ԱԻԱՆԴԱԿԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Միրելի Հաւատացեալներ,

Յառաջիկայ Ուրբաթ, 13 Փետրուարի երեկոյեան ժամը 7-ին, ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ տօնին առիթով, Եկեղեցոյս մէջ տեղի պիտի ունենայ ՆԱԽԱՏՕՆԱԿԻ արարողութիւն: Այս տօնը՝ իր կրօնական եւ ազգային բովանդակութեամբ հայ ժողովուրդի կեանքին մէջ ունի իր իւրայատուկ տեղը: Հետեւաբար, նախագահութեամբ

Թեմիս Բարեջան Կաթողիկոսական Փոխանորդ՝

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՏԷՐ ՄԱՍԻՍ Ծ. ՎՐԴ. ԶՕՊՈՒՅԵԱՆԻ

տեղի պիտի ունենան հետեւեալ արարողութիւնները:

1. Երեկոյեան ժամերգութիւն: 2. Քարոզ: 3. Անդաստան:

4. Նորապսակ ամուլներու ընկերակցութեամբ, Եկեղեցական թափօրը պիտի առաջնորդուի Եկեղեցոյ բակը, վառելու աւանդական խարոյկը:

5. Եկեղեցոյ բակին մէջ Գերպ. Հայր Սուրբի, Տէր Հօր եւ նորապսակ ամուլներու ձեռքով պիտի վառուի աւանդական խարոյկը:

6. Այս առիթով Եկեղեցոյս Տիկնանց Յանձնախումբին կողմէ պատրաստուած են յատուկ լապտերներ: Փափաքողները կրնան գնել այդ լապտերները եւ Քրիստոսի լոյսը տանիլ տուն, որպէսզի ամբողջ տարին Աստուծոյ լոյսով լուսաւորուի հայ ընտանիքը:

7. Հրավառութեան աւարտին պիտի կատարուի մանուկներու ընծայում:

Այսու կոչ կ'ուղղենք մեր համայնքի զաւակներուն եւ յատկապէս նորապսակ ամուլներուն, որ խումներամ մասնակցին վերոյիշեալ արարողութիւններուն:

Քուէթ, 5 Փետրուար, 2015

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ